

և 5) Բացէիրաց չցանկալ մեր գիտութիւնը աւելացնել, մինչև որ լիովին չտիրապետենք այն, ինչ որ առ ժամայն ուսումնասիրում ենք:

* *

Նոր Պոմպիւս.— Այսպէս են կոչում Պրիէն քաղաքի աւերակները, որի հողակոյտը այժմ՝ բաց են անում և նորադոյն հնաստական գիտերից ամէնահրաշալիսն է համարում: Այդ քաղաքը Փոքր Ասիայումն է եղել և նորա տեղ կանգնած է այժմեան Սամսուէր: Մի քանի տարի առաջ անգլիական հնաստ գիտնականները գտան և հետազոտեցին Աթենասի տաճարը, քաղաքի գլխաւոր սրբութիւնը, որ Աղէքսանդր մեծի հրամանով կառուցուել էր: բայց յետոյ խոպան մնաց և իսպառ աւերուեցաւ շրջակայ ժողովրդեան ձեռքով: 1895 թ. Պրուսիայի տերութիւնը գումարներ նշանակեց պեղումները նորոգելու համար, այն ևս երիտասարդ ճարտարապետ Ալիշէլմ Ալիբերգի առաջնորդութեամբ: Այժմ գործն այնքան առաջացել է, որ պեղումների արդեանց մեծ կարեւորութիւնը յայտնի երևում է. բաց են անում մի քաղաք, որ այնպէս լաւ է պահպանուած: ինչպէս հռչակաւոր Պոմպեան, Այդ գիւտը մեծ նշանակութիւն է ստանում մանաւանդ այն պատճառով, որ մինչ ցայսօր ոչ մի ուրիշ պեղում ձիջդ գաղափար չի տուել Տին յունաց քաղաքի, անոր հասարակաց շէնքերի և մասնաւոր տների մասին: Բացուող քաղաքը անշուշտ Յունաստանի ծաղիկեալ ժամանակին է պատկանում: անոր փողոցները ուղիղ անկիւնով են կտրուած և կանոնաւոր յատակագիծ ունին: հողի տակից երևան են գալիս սիւնների կարգեր, թատրոններ, կրպակներ, աներ իրանց ներքին կահ կարասիքով և լիակատար անտեսական պիտոյքներով: Աթենասի տաճարից դէպի հարաւ գտնվում է «agora», այսինքն՝ «աղ-գային ժողովի» արձանադարձ հրապարակը՝ չորեք-կուսի արձակ սիւներով զարդարած: անաղբաւ պահպանուել է՝ թատրոն յիշեցնող մի փոքր քառանկիւնի շէնք: 16 շաբը նստարաններով, որ անշուշտ քաղաքային խորհրդեան սրահ է եղել: Այս շէնքի մի պատի մէջ կայ կամար—յունաց ճարտարապետութեան գրեթէ հազուագիւտ և անյայտ հանգամանք: Հողի շեղջերից վերջնականապէս մերկացրած շէնքերի մէջ, աւելի աչքի է ընկնում թատրոնը գեղեցիկ պահպանուած ընծով: որով հնարուոր է գտնում լուծել յունաց թատրոնին վերաբերեալ մի քանի այնպիսի խնդիրներ, որոնք ցայսօր վիճելի էին:

Ս. Ս.

† ՎԻԼԻԱՍ ԳԼԱԴՍՏՈՆ.

Պլադատոն վախճանուեցաւ և գրեթէ ամբողջ քաղաքակիրթ աշխարհը ողբաց նորա մահը: Բոլոր ազգերի թերթերը, խօսելով նորա մասին համարում են առ հասարակ այդ մահը մի մեծ կորուստ ոչ միայն անգլիացիների, այլ և ընդհանուր մարդկութեան համար: Բիշ մարդիկ կարելի է ցոյց տալ պատմութեան մէջ, որոնք իրենց մեծ հռչակի հետ միանգամայն այնպիսի ընդարձակ ու բացարձակ համակրութիւն վայելած լինին ազգակիցների և օտարների, կողմնակիցների և հակառակորդների կողմից անխօրի որպիսին արտայայտուեցաւ Մեծ Մերուսու մահուան առթիւ՝ աշխարհի ամեն կողմերից: նորա երկար կեանքի ասպարէզը փառաւոր գործերի մի ահագին շղթայ է ներկայացնում՝ նորա հանձարը բազմակողմանի նշանաւոր յատկութիւնների մի հրաշալի զուգորդութիւն: բայց նշանաւոր գործեր շատերն են կատարել: մեր զարն ունի քաղաքագէտների ճարտասաններ, անտեսագէտներ ևլն.: որոնք կարող են յաջողութեամբ մրցել նորա հետ: Եթէ Պլադատոն սիրուած և յարգուած է բոլոր մարդոց կողմից՝ առանց աղբի և կրօնի խտրութեան, այդ առաւել նորա համար է: որ նա ինքն ևս սիրել է ամէնքին անխօրի, պաշտպանել աշխարհի առաջ բոլոր ազգերի պատիւը՝ խեղճի և անկեալի գատը, նա իւր մեծ հանձարի հետ միացրել է ևս առաւել մեծ բարոյական յատկութիւններ, որոնք նորա խիական փառքն են կազմում: և քրիստոնէից եկեղեցին ամէնից աւելի իրաւունք ունի պարծնաւոր այդ փառքով, որովհետեւ քրիստոնէական է այն ամէնը, ինչ որ գեղեցիկ է և վեհ՝ այդ մեծ մարդու մէջ: Յանձին Պլադատոնի գերեզման է իջնում եկեղեցւոյ այն սակաւաթիւ զաւակներից մին, որոնք ամենագայթակղեցուցիչ պայմանների մէջ գտնուելով հանգերձ ամօթ չեն համարել աւետարանին աշակերտելը՝ ջերմեանքն քրիստոնեաներ են եղել ամբողջ կեանքում և յաղթել աշխարհին: Եթէ քաղաքագիտութեան մասին այն վատ կարծիքը կայ, ասում է Chr. Welt-ի թղթակիցը՝ որ նա փչացնում է մարդու բնաւորութիւնը՝ որչափ ծանր պէտք է լինէր ուրեմն մի կեանքի մէջ, որ 22 տարեկանից սկսած մինչև 85 տարին քաղաքագիտութեան էր նուիրուած՝ քրիստոնէական կեանքի գաղափարը բարձր պահել: Պլադատոն պահեց բարձր՝ այդ վիպում են նորա բոլոր գործերն ու բոլոր կենսագիրները, և այդ նորա ամէնից աչքի ընկնող արժանիքն է:

Ալ. Պլադատոն ծնուած է 1809 դեկտ. 29-ին Լիվերպուլում: նորա հայրը վաճառական էր, որ

մեռաւ 87 տ. հասակում. երկար տարիքը սովորական երեւթ է եղել այդ նշանաւոր ընտանիքի մէջ: 1839 թ.-ին ամուսնանալով Լափարգէն դղեակի տիրոջ անդրանիկ դուստր Ատարինէի հետ՝ նա այնուհետեւ հաստատուն բնակիչ մնաց այդ դղեակի, որ և հռչակուեցաւ նորա անունով և որ իւր շրջակայքի հետ մէկտեղ ամփոփում է նորա մեծարգին կեանքի և բարեգործութեան բազմութիւ յիշատակարանները: Արդէն 1832 թ. ինչ երբ նա, գեռ ևս 23 տարեկան՝ այդ խորհրդարանի անդամ ընտրուեցաւ: մեծ յոյսեր ունէին նորա ապագայի մասին և կարծում էին թէ ժամանակով տրիսնէի (պահպանողական) կուսակցութեան սիւներից մէկը կը լինի: Սակայն վերջին կարծիքը շարճարացաւ: Գլադատոն սկսեց շուտով նկատել, որ իւր ազատ և լայն գաղափարները չեն համակերպում մեծ մասամբ պահպանողականների նեղ հասկերին և 1846 թ. ինչ նա իրեն այնչափ հեռու էր դրում այդ կուսակցութիւնից, որ լաւ համարեց թողնել առ ժամանակ քաղաքական ասպարէզը: Երբ նա կրկին հանդէս եկաւ 1859 թ. ինչ, արդէն բացարձակ կերպով վիզերի (ազատամիտների) կողմն էր անցել, իսկ 1867 թ.-ից ի վեր, երբ մեծ հռչակ ստացաւ իրլանդական դատի պաշտպանութեամբ՝ ձանաչուում էր իրրե այդ կուսակցութեան անվիճելի պարագլուխ: Երկու տարի յետոյ նորան յանձնուեցաւ ազատամիտ կուսակցութեան ներկայացուցիչներից նախարարութիւն կազմել: և այնուհետեւ նա մի քանի անգամ կառավարութեան գլուխ է եղել՝ վերջին անգամ՝ 1892 թ. ինչ, երբ ստիպուած էր քիչ ժամանակ յետոյ ընդ միշտ հեռանալ ասպարիզից, ձերութեան պատճառաւ: Նորա քաղաքական գործունէութեան ամենափայլուն էջերը կազմում են Երլանդիայի անկախութեան և Բոլզարիայի ազատութեան համար վարած պայքարները: իսկ յաւիտենական յիշատակաց արժանի մի բողոքէն նորա կեանքի այն է, որ 1896 թ. ի սեպտ. 24 ինչ 87 տարեկան հասակում, իւր հանգստութեան վայրը թողած հոետորական ամբիոնի վերայ բարձրացաւ իւր հանգչող ձայնի վերջին մը՝ նացորդով՝ բողոքելու տառապեալ հայ ժողովրդի խողովողիչների դէմ: — Գլադատոն վախճանուեցաւ մայիսի 7 ինչ 89 տարեկան հասակում և թաղուեցաւ Աեստմինստրի մայր տաճարում՝ ագգային հաշուով:



ՄԱՏՆՆԱԽՍՈՒԹԻՒՆ

ՈՒՍՈՒՅՈՒՄՆ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԿՐՕՒԹ.—

Սահակ քան. Սահակեանց: Տփլիս, 1898:— Արժ. Սահակ քահանան որի կրօնի ուսուցման գանազան ծիղերին վերաբերեալ գասպարիքը միջակից շունին առ այժմ և իրենց արժանիքին վայել ասաջնակարգ տեղ են բռնում մեր գաղտցական գրականութեան մէջ՝ նպատակ է ունեցել անշուշտ այս գրքում ամփոփել իւր մանկավարժական և կրօնական հայեացքները, իւր երկարամեայ ուսուցչական փորձառութեան արդասիքը. ուսար թող ներուի մեղ ևս համեմատարար լայն շրջանակով, ընդհանուր տեսակէտների ներքոյ քննութեան առնել նորա երկասիրութիւնը և տեսնել, թէ որչափ ուղիղ են նորա հայեցողութեան հիմունքները:

Հայր Սահակի մի ուրիշ գրուածքի մասին խօսելիս մենք ցանկալի էինք համարել, որ նա «աւելի նոր և ոչ աշխարհական, այլ հմուտ աստուածաբան մանկավարժների գրուածքներին հեռեէր».*) բայց ցաւելով տեսնում ենք, որ այդ ցանկութիւնն ուշադրութեան չի արժանացել: Օտար հեղինակութիւններ անկասկած նա աչքի առաջ ունեցել է, ինչպէս իւր միւս այնպէս և մանաւանդ այս նոր աշխատութեան մէջ, որ եթէ չի յիշում, մենք համոզուած ենք՝ ոչ թէ ուրիշի բարիքը սեփականելու տենչով է, այլ ուրիշ կողմնակի խորհրդածութիւններ են պատճառ. թէպէտ մենք այդ ևս իրաւացի չենք գտնում և աւելի բարեոք կհամարէինք յիշատակուած տեսնել բոլոր այն գրքերը որոնցից նա օգուտ է քաղել. դորանով քննագատութեան և գնահատութեան գործն ևս շատ աւելի դիւրին կլինէր: Յամենայն դէպս այն հեղինակութիւնները որոնց Հայր Սահակ հետեւում է, մեր ժամանակի ոչ աստուածաբանական և ոչ մանկավարժական գիտութեան ներկայացուցիչներ են, այլ 50-ական թուականների սերունդ, հեռեոյ Հեղեյ—Հերար-

*) Տես. Ururus. 1896. վերջուր. էր. 80.